ՀԱՐՑԱԶՐՈՅՑ - Հօր՝ Յովհաննէս Բադալեանի ժողովրդական երգարուեստի շարունակականութիւնը՝ Նունէ Բադալեանի օպերային արուեստում

Չորեքշաբթի, 29 Փետրուար 2012 08:30 | Ալիք • Թեհրանէ

Հարցազրոյց՝ Նունէ Բադալեանի հետ

Երբ դուստրն է դառնում հօր հոգու ելեւէջների փոխանցողը, այն առաւել քան երբեւէ՝ խորիմաստ զգացական է դառնում:

Վերջերս Հ. Մ. «Արարատ» կազմակերպութեան Երէցների միութեան կազմակերպութեամբ մեր համայնքում հիւրընկալուեց ժողովրդական երգի թարգման Յովհաննէս Բադալեանի դուստր Նունէ Բադալեանը: Ճիշտ է, Նունէն եղաւ հօր արուեստի շարունակականութիւնը պահպանողը, բայց ոչ՝ ժողովրդական երգի անդաստանում, այլ այն նուրբ երաժշտական լարի նման, կարմիր թելի պէս, անցկացրեց դասական արուեստում, որտեղ այսօր ստեղծագործում եւ արարում է Նունէ Բադալեանը:

Առաւել մանրամասն իր եւ իր գործունէութեան մասին այս հարցազրոյցում մեր հարցերի ընդմիջից պատասխանում է ինքը՝ Նունէ Բադալեանը:

Հ.- Նունէ, պահպանելով հայրիկիդ՝ Յովհաննէս Բադալեանի երգի ազգային ոգին, այն իւրօրինակ ձեւով դասականի հետ

միախառնված՝ մատուցում ես երաժշտասէր հասարակութեանը: Կարելի՞ է աւելի մանրամասնես:

Պ.- Նախ ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել այս հրաւէրի համար, շատ յուզված եմ. մտայ այստեղ, այս խմբագրութիւն, գիտէք, ամէն մէկը մօտենում է եւ ասում՝ գիտէք, իմ հայրիկը Ձեր հայրիկի մանկութեան ընկերն է, միւսը՝ մեր տանը եղել է Ձեր հայրիկը եւ այդ բոլորը ինձ շատ յուզեց: Միշտ ցանկացել եմ լինել Թեհրանում՝ հայրիկիս ծննդավայրում, չէր ստացւում եւ երբեք չէի պատկերացնում, որ կարող է համերգներով գամ, շատ շնորհակալ եմ պրն. Յարութիւնից եւ տկն. Արմինէից՝ այս հրաւէրի համար: Իսկ ինչ վերաբերում է հարցին, ճիշտն ասած՝ ո՛չ, ես ժողովրդական երգերի երգչուհի չեմ, չնայած որ շատ եմ սիրում, դրա մէջ եմ մեծացել: Գիտէք, ես օպերային երգչուհի եմ, Ալ. Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի թատրոնի մեներգչուհի, այսինքն՝ իմ ամբողջ ուղղուածութիւնս օպերային է, բայց քանի որ ժողովրդական երգի առրրայում եմ մեծացել եւ ասեմ, որ ժողովրդական երգի կոկորդ չունեմ, դա մի ուրիշ կոկորդ է եւ ես իսկապէս չունեմ, բայց շատ եմ սիրում մեր երգերը, դրա մէջ մեծացել եմ եւ ինչ որ զգում եմ աւելի յարմար է ինձ, ես կարող եմ մատուցել, որովհետեւ, գիտէք, օրինակ, վերջերս համերգ եղաւ մեզ մօտ, շոուի, էստրադային երգիչների հետ խառնեցին օպերային երգիչներին, լաւ համերգ էր, բայց ես չեմ սիրում, երբ որ օպերային երգիչները երգում են էստրադային երգեր, որովհետեւ ձայնի գոյնը փոխւում է եւ դա ինձ դուր չի գալիս եւ քանի որ ինձ դուր չի գալիս, ես ինքս ինձ այդտեղ չեմ տեսնում, իմ ձայնս այդտեղ դուր չի գալիս: Եւ դրա համար՝ ես աշխատում եմ չմօտենալ ժողովրդական գործերին, որովհետեւ դա մի իւրայատուկ կոկորդ է, ինձ մօտ չի ստացւում դա, բայց երգեր կան, օրինակ, Սայեաթ Նովայից, կան երգեր՝ ինչ որ ձեւ ինձ թւում է, որ կարողանում եմ ներկայացնել: Եւ կրկին շեշտում եմ դա, ինձ այդքան էլ հոգեհարազատ չէ, ես դասականն աւելի եմ նախընտրում:

Հ.- Հակիրճ՝ եթէ կարելի է քո մասին:

Պ.- Իմիջիայլոց, հայրս լինելով ժողովրդական երգիչ՝ շատ էր սիրում դասական երաժշտութիւնը եւ ասեմ, որ արիաներ էր երգում, գիտէր շատ օպերային արիաներ, չէ՞ որ ինքը Իրանում չեխ դասատուի մօտ էր ուսանել դասական եւ շունչը իր մօտ դրուած էր շատ դասական ձեւով, ինքը ժողովրդականի մէջ էլ շատ կիրթ էր, որովհետեւ սիրում էր եւ մեր տանը միշտ կային ձայնասկաւառակներ՝ տարբեր իտալացի երգիչների կատարումներով, յայտնի արիաներ, օպերաներ եւ ես նաեւ դրա մէջ եմ մեծացել: Եւ ասեմ, որ մանկուց ինքը երգում էր եկեղեցում դիսկանտեր

երգախմբում եւ մենակատար էր նաեւ: Եւ այդ ժամանակ Իտալիայից գալիս են մարդիկ՝ երաժիշտներ եւ ցանկանում են տաղանդաւոր երեխաների հաւաքել, մի քանի հոգի ընտրում են, որոնց հետ նաեւ հայրիկիս: Մայրը չի թողնում: Ես կարծում եմ, որ եթէ նա այդ ժամանակ գնար Իտալիա, անպայման օպերային երգիչ կը դառնար: Ու կարծես այդ երազանքը, որ ինքը չի կարողացել իրագործել, ցանկացաւ իմ միջոցով եւ երբ որ ես դպրոցում էի, դեռ 6-րդ դասարանում էի ուսանում, հայրս գնաց Աւստրալիա եւ այնտեղից բերեց, այսպիսի ռաք-օպերա կար, Ջիսըս Քրայսթ սուփըր սթար, այն բերեց եւ ամէն օր լսում էի ու ամբողջ օպերան անգիր էի արել: Այդ Մարիա Մագդալենայի արիաները, երգերը ամբողջը երգում էի եւ հայրս լսելով ինձ՝ ասաց՝ Նունէ, գիտես դու շատ լաւ ձայն ունես, մինչեւ այդ՝ ես ասեմ, որ չէի երգում: Երաժշտական դպրոց էի գնացել, բայց չէի երգում, քոյրս էր երգում եւ յանկարծ իր համար յայտնութիւն էր, որ ես երգում եմ: Այդտեղից սկսուեց ամէն ինչ, ինձ տարաւ կոնսերւատորիա՝ երաժշտանոց, Տաթեւիկ Սազանդարեանի մօտ: Տաթեւիկ Սազանդարեանը լսեց ինձ եւ ասաց, որ ես ձայն ունեմ եւ կարող եմ սովորել. իհարկէ, դեռ փոքր էի այդ ժամանակ, 16 տարեկան էի, ասաց՝ թող մի փոքր մեծանայ, երկու տարուց թող գայ անպայման ուսանի: Այդպէս էլ արեցինք. ես մի փոքր մեծացայ, սկսեցի պարապել, վոկալով զբաղուել մասնաւոր եւ այդպէս ընդունուեցի երաժշտանոց՝ Տաթեւիկ Սազանդարեանի դասարանը: Այդտեղից սկսուեց՝ յետոյ աւարտեցի, ընդունուեցի եւ աւարտեցի ասպիրանտուրան, եւ հէնց այդ ընթացքում ընդունուեցի օպերային թատրոն՝ որպէս մենակատար: Մի որոշ ժամանակ անց ամուսնուս աշխատանքի բերումով՝ մենք տեղափոխուեցինք Մոսկւա եւ դուրս եկայ օպերային թատրոնից, տեղափոխուեցի Մոսկւա՝ 7 տարի. ես մի փոքր կորցրեցի, ճիշտ է, ես այնտեղ պարապում էի, շատ լսուեցի տարբեր տեղերում, բայց այնտեղ դժւար է: Երբ վերադարձանք, ես լսուեցի օպերային թատրոնում եւ կրկին ընդունուեցի մեր թատրոնում. դա 99 թւականն էր եւ մինչ օրս ես օպերային թատրոնի մեներգչուհի եմ. երգել եմ բոլոր գլխաւոր դերերգերը՝ սկսած «Անուշ» օպերայից՝ Տիգրանեանի, Չուխաճեանի «Արշակ 2-րդ»-ում Օլիմպիայի դերերգն եմ կատարում, երգում եմ «Տրաւիատա»՝ Վերդի եւ .... Դրա հետ մէկտեղ՝ ունեցել եմ շատ մեծ գործունէութիւն նաեւ Կամերային նւագախմբի հետ՝ այն ժամանակ Արամ Ղարաբէկեանի ղեկավարութեամբ, նրա հետ շրջագայել եմ աշխարհի շատ երկրներում, նւագախմբում էլ հանդէս եմ եկել որպէս մեներգչուհի: Վերջին անգամ եղել եմ ԱՄՆ-ում՝ Բոստոնում եւ Պրովիդենսում ամռանը: Հիմա միայն օպերայում եմ երգում:

Հ.- Կը ցանկանա՞ս վերջում որեւէ բան աւելացնել:

Պ.- Կը ցանկանայի, որ համայնքը շարունակի այսպէս ուժգնօրէն զօրեղ ոգով հայ մնալ, քանի որ օտար ափերում հայապահպանութիւնը ուղղակի հերոսութիւն է. ես դա հերոսութիւն եմ համարում:

Հարցազրոյցը վարեց Արմինէ Էլիազեանը